Ի՞նչ համեմատութիւն կարող էր լինել իմ և խանի մէջ։

Նա երկրի տէրն էր, որ իւր արժանաւորութեամբ և աշխատութեամբ էր ձեռք բերել։ Հիւսէյին աղէն ինքը միայն հաճել էր շահի սիրտը, տիրել էր Թայզաբարայ գեղեցիկ հովտին և նորա ծաղկազարդ լեռներին։ Հպատակներին մնում էր վայելել այդ արդարասէր անձի հովանաւորութիւնը։

Այս խորհրդաւոր լռութեանը բարեբախտաբար լաւ նշանակութիւն տուեց խանը. նա կարծեց, որ ես այդ կողմերը երբեմն երբեմն երեւացող, քաղաքագիտութեամբ պարապող, կառավարչական պաշտօնեաներից մէկն եմ, որ ծածկում է ինք զինքը իւր գաղտնի մտադրութիւնների յաջողութեան համար։

Խանը իւր վատառողջութեան վերայ խօսակցութիւնը շարունակելով, գանգատվում էր, որ իւր անձը միշտ սառն է։ Ես կարծելով, որ այդ արիւնի պակասութիւնից է առաջ եկել, մի բժշկական խորհուրդ տուի նորան, այն է հին գինի խմել։ Խանը ժպտաց, իսկ մոլլան (հոգևորական) որ կրթնել էր նորա ձախ կողմը, նկատեց, որ մուսիւլմաններին (ուղղափառներ) արգելված էր այդ։ Երբ խանը և մոլլան պատրաստվում էին վերջինքի նամազը կատարել, ես ներողութիւն խնդրեցի նորանից գնալ